

27876

Հիշա քարտիկ  
Գրադարանի փոխանակման կարգի  
օրենք  
1930 - 31 թթ.

336.2
Չ - 94



15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

№ 5 „ՊՐՈԼԵՏԱՐ“-Ի ՄԵՍՏՇԱԿԵՆ ԳՐԵԳՐԵՆ № 5

4-94

93

# ԱՅՍ ՏԱՐՎԱ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՈՐԵՆՔԸ

1930—31 թ.

36.2  
4-94

„Պրոլետար“—, Մախիկամի,  
Թիֆլիս—1930 թ.



336.2

4-94  
w

### Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՎՐԱՏԱՆԻ ՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

### 1930-31 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտրոնական և ժողովրդական տնտեսական կոմիտեի 1930 թ. փետրվարի 23-ից հաստատված և գործադրության է դրված 1930-31 թվի միասնական գյուղատնտեսական հարկի նոր կանոնադրությունը, վորը դարձրած ու լրացրած է 1930 թ. մարտի 9-ին, Անդրժողովրդական «1930-31 թ. գյուղատնտեսական հարկի որենքի հիմնական սկզբունքների մասին» № 227 վորոշմամբ:

1906  
19058

Միասնական գյուղատնտեսական հարկի կանոնադրության մերանայելուն հիմք ծառայեցին հետևյալ նկատառումները.

Գյուղատնտեսության կոլլեկտիվացման ծավալումը, վորն արդեն ընդգրկել է յերկրի գյուղացիական տնտեսությունների զգալի մասը, ամբողջ շրջանների և դավառների համատարած կոլլեկտիվացման անցնելը և սրա հետևանքով, համատարած կոլլեկտիվացման շրջաններում կուլակությունը, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելու յնդիորդ անհրաժեշտ են դարձնում միասնական գյուղատնտեսական հարկի որենքը այնպիսի փոփոխության յենթարկել, վորն ապահովի յոչոր կոլլեկտիվ տնտեսության դարգացումը և գյուղատնտեսության արտադրական ուժերի ծավալումը:

Կոլլեկտիվացման հետագա ծավալման, կոլանտեսությունների յոչորացման, նրանց յեկամտարբերության բարձրացման և նրանց հանրայնացված Ֆոնդերի ալելաց-

մանը յայն չափերով աջակցելու այդ յընդերն անհրաժեշտ է դարձնում կոլլեկտիվ տնտեսությունների նկատմամբ պրոգրեսիվ հարկումից անցնել համեմատական հարկման, յերբ յեկամտի յուրաքանչյուր ուղբու համար վորոշված կուպորը (ставка) չի բարձրացվում կոլլեկտիվ տնտեսության յեկամուտն ալելացնելուն զուգընթաց:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, վոր անդրկոլկոսյան ՍՍՖՀ և, մասնավորապես, Վրաստ. ՍՍՀ պայմաններում չքավորական և միջակ անհատ տնտեսությունները գեռ ևս յաղում են գերակշռող գեր, Անդր. ՍՍՖՀ կառավարությունը, միասնական բնագավառում յրեն վերապահած յրավունքի հիման վրա, վոչ միայն պահպանեց 1929-30 թվի անհատ տնտեսությունների համար նախատեսած արտոնությունները, այլև զգալի չափով յայնացրեց նրանց սահմանները, մանավանդ այն գյուղացիական տնտեսությունների համար, վորոնք յավացնում են յրենց տնտեսության դրույթյունը, յայնացնում են ցանքի տարածույթյունը և բարձրացնում յրենց անասունների քանակը:

Այս սկզբունքների հիման վրա հրատարակած նոր որենքը տալիս է մի չարք նոր արտոնություններ չքավոր ու միջակ այն անհատ տնտեսություններին, վորոնք ընդլայնում ու յավացնում են բամբակի, կա-

Ա. Ֆ. Մյասնիկյանի ան հրատ. «2 Վ» Ռուսթավելի պր. 36. Գլավլիտ 98. Պատվեր 54. Տիրաժ 10.000



նևիի և արժեքալոր բույսերի ցանքերը, բույսեր, վորոնք անհրաժեշտ են գյուղի և քաղաքի աղբաքնակութան կարևոր ասլ-րանքներ մատակարարող գործարանների համար:

Սրախուսելու համար այն չքալոր ու միջակ տնտեսութուններին, վորոնք արդյունաբերական անասնաբուծութան ուսյուններում կշատացնեն շուկա հանվող կամ պետական ու կոոպերատիվ կազմակերպութուններին ծախվող մթերքի քանակը կոգտվեն այն լրացուցիչ արտոնութուններից, վորոնք նախատեսված են անդրկոմիկաս. ՍՍՖՀ կառավարութան կողմից գյուղմիասնարկի նոր որենքից դուրս:

Վերոհիշյալ նկատառումներով Վրաստանի ՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը վորոշում է հաստատել Վրաստանի ՍՍՀ և նրա կազմի մեջ մտնող հանրապետութունների և ինքնավար շրջանների սահմաններում գյուղմիասնարկի կիրառման հետևյալ կարգը:

ՀԱՏՎԱԾ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա յեն՝

ա) անհատական գյուղացիական տնտեսութունները:

բ) կոլլեկտիվ տնտեսութուններ և

գ) խորհրդային տնտեսութուններ:

2. Հարկը հաշվվում է յուրաքանչյուր տնտեսութունի տնտեսութան ամբողջ յեկամտից, վորը դրամով կամ բնարերքով ստացվում է հետևյալ աղբյուրներից. — ա) դաշտամշակութունից, բ) մարգագործութունից, գ) ամեն տեսակի անասուններից, բացի խոզերից, դ) գյուղատնտեսութան հետևյալ հատուկ ճյուղերից — բանջարբուծութունից, պարտիզպանութունից, այգեգործութունից, յաղողագործութունից, բամբակագործութունից, չալթուկի և կարտոֆիլի մշակույթներից, ծխախոտագործութունից, ե) վոչ գյուղատնտեսական դատումներից (աշխատավարձ, տնայնագործական, արհեստային և այլն դատումներ):

Ծանոթութուն 1. — Ձկնորսութունից ստացված յեկամտեսները գյուղատնտեսական հարկի յենթակա յեն ամենուրեք այն դեպքերում, յերբ վորսած ձուկը ամբողջովին կամ մասամբ վաճառքի յե հանվում:

3. Այն աղբյուրները, վորոնց յեկամտար յենթարկվում է միասնական գյուղատնտեսական հարկի, ուրիշ վոչ մի հարկի յենթակա չեն բացի ա) արհեստահարկից, վորին յենթարկվում են վոչ գյուղատնտեսական դրամուրենքերը շրջանառութան տուկոսային հարարերութամբ և բ) ջրային տուրքից՝ ջրովի հողագործութան շրջաններում:

Այն հողամասերից, վորոնց յեկամտար յենթարկվում է միասնական գյուղատնտեսական հարկի, ինչպես նաև շենքերի բունած այն հողամասերից, վորոնք անմիջկանոսին կապված են գյուղատնտեսական ոգտագործութան հետ, ոենտա չի դանձվում:

Միասնական գյուղատնտեսական հարկի յենթարկվող տնտեսութունների կազմի մեջ մտնող շենքերն ազատվում են շենքերի տեղական հարկից:

(Գյուղատնտեսական միասնարկի կանոնադրութան 3-րդ կետ):

Ծանոթութուն 2. — Կուլակային տնտեսութուններում գյուղատնտեսական հարկի հետ միաժամանակ արհեստահարկ է գանձվում նաև այն վոչ-գյուղատնտեսական դրամուրենքերից, վորոնք արհեստահարկի յեն յենթարկվում կայուն կոպարներով:

4. Այն քաղաքացիները, վորոնք գյուղատնտեսութամբ են պարապում քաղաքային հողամասերում, պետք է վճարեն կամ միասնական գյուղատնտեսական հարկ, կամ յեկամտային հարկ:

Միասնական գյուղատնտեսական հարկ վճարում են թե՛ գյուղատնտեսութունից և թե՛ վոչ հողագործական աշխատանքից ստացած յեկամտից Վրաստանի ՍՍՀ բոլոր քաղաքների և քաղաքատիպ ավանների (բացի Թիֆլիսից, Բաթումից, Սուխումից, Բուխարայից, Փոթիից, Բորժոմից, Գագ-

բիից, Սոնախից, Թելավից և Ճիաթուրայից) քաղաքացիները:

(Գյուղմիասնարկի կանոնադրութունի կետ 4):

5. Քաղաքներում ապրող և միաժամանակ քաղաքից դուրս գյուղատնտեսութամբ դրամով քաղաքացիները գյուղատնտեսական հարկ են վճարում գյուղական վայրերում ստացվող յեկամտեսների, ինչպես նաև աշխատավարձի համար. մնացած քաղաքային յեկամտից, բացի աշխատավարձից, նրանք վճարում են այլ հարկեր ամբողջ քաղաքային բնակչութան հետ հավասարապես:

(Գյուղմիասնարկի կանոնադր. կետ 5):

6. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա չեն աշխատավարձի հետվյալ տեսակները, վորոնք ստացվում են՝

ա) պահարկի կարգով կատարված աշխատանքի համար.

բ) գյուղատնտեսութան մեջ բատրակի (բատրակուհու) կատարած աշխատանքի համար.

գ) ընտրովի ստորին խորհրդային պաշտոններ վարելու համար (շրջանային գործադիր կոմիտեներում և գյուղական խորհուրդներում):

դ) փոխադարձ ոգնութան գյուղացիական ընկերութունների կոմիտեներում և նրանց համապատասխան կազմակերպութուններում, գյուղական ստորին կոոպերատիվներում վարած ընտրովի պաշտոնների ինչպես նաև ալմանային կոոպերատիվ կազմակերպիչների աշխատանքի համար.

և) գյուղական և շրջանային բժշկական և անասնաբուժական անձնական կազմի (բժիշկների, ատամնաբուժների, բուժակների, մանկաբարձուհիների և այլն), շրջանային գյուղատնտեսների, ինչպես նաև կոլլեկտիվ ու խորհրդային տնտեսութուններում և կոոպերատիվ կազմակերպութուններում աշխատող գյուղատնտեսների ու նրանց ոգնականների, շրջանային հողաշինարարների և մեկտրատորների, շրջանային զոոտեխնիկների և վերահսկիչ աստիտենտների, անտասապետների և նրանց ոգնականների:

անտասապետների և անտասային պահակների, գյուղական ժողովրդական ընկիչների, գյուղական խորհուրդների քարտուղարների, գյուղական նամակատարների, գյուղական միլիցիայի, շրջանային վիճակադիրների, գյուղական հիվանդանոցների և դպրոցների, շրջանային գործադիր կոմիտեների և գյուղական խորհուրդների ամբողջ սպասարկու անձնական կազմի աշխատանքի համար.

զ) գրական և կուլտուր-լուսավորական աշխատանքների համար (գյուղթղթակցի, խրճիթվարի և այլն):

Բացի դրանից, միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա չեն զինվորական ծառայողների բոլոր տեսակի բավարարութունները, ինչպես և պետական հիմնարկներից ստացվող կենսաթոշակները:

Այս հոդվածում թված յեկամտեսները յեկամտահարկի յեն յենթարկվում պետական յեկամտահարկի կանոնադրութան համաձայն:

Ծանոթութուն 1. — Գյուղական ստորին արհեստագործական կոոպերատիվներում վարած ընտրովի պաշտոնների համար ստացվող աշխատավարձը ազատվում է միասնական գյուղատնտեսական հարկից միայն այն դեպքում, յերբ ընտրովի անձինք տվյալ կոոպերատիվում այլ յեկամտեսներ չունեն, բացի ընտրովի պաշտոնի համար ստացվող աշխատավարձից:

Ծանոթութուն 2. — Այս հոդվածի «ե» կետում նախատեսած գյուղական միլիցիայի ծառայութունը հավասարեցնում է գավառակային և ուսյունական միլիցիատան ծառայութանը, յեթե նրանք անմիջկապես սպասարկում են գյուղական վայրի:

7. Միասնական գյուղատնտեսական հարկի տարին սահմանվում է մայիսի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ:

(Գյուղմիասնարկի կանոնադր. կետ 7):



Հարկի յեմթակա յեկամուտների վորոշելը Ա. Յեկամտարերության նորմաները

Տ. Դաշտամ շահույթից, մարդագործութունից, անասնապահութունից, բանջարբուծութունից, պարտեզայնութունից, սպորտից, ծխախոտագործութունից և այլ հատուկ ճյուղերից տնտեսության ստացած յեկամուտը (բացի կուլակային տնտեսություններից) վորոշվում է յեկամտարերության նորմաներով:

Յեկամտարերության նորմաները սահմանվում են այս կանոնագրության 8—11 հոդվածների համաձայն: 0

Ծանոթութուն. — Գալատական դործադեր կոմիտեները կարող են կանոնավոր հաշվապահութուն ունեցող կուլակային տնտեսությունների համար սահմանել յեկամուտը վոր թե ըստ նորմաների, այլ ըստ հաշվետվության:

9. Թված յեկամուտի աղբյուրների համար սահմանվում են յեկամտարերության հետևյալ կայուն նորմաները՝ Արխայիայում, Աջարիստանում, Հարավ-Սևեթիայի ինքնավար շրջանում և Վրաստանի բոլոր դավաններում ու շրջաններում դործադերութուն համար:

10. Բամբակագործության համար պլտանի ջրովի հողերի վրա ցանված հացաբույսերի յեկամտարերության նորմաները

1930—31 թ. ՅԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Աղբյուրների անունները	Ցանք	Վար	Նորմալը	Պողոտան աղբյուրներ և կարկին	Նաղող	Բանջարանոց բուստան	Կարտոֆիլ	Ծխախոտ	Մանդարինա	Բամբակ	Չավթուկ	Նորը յեղձ անասուն (վիկդե)	Յեղձներ և դրմաններ	Ձիեր և ուղտեր	Եչեր	Վոչխարներ և աղծեր	Ծանոթ.
Ախալքալ գավառ	55	—	20	200	—	120	35	80	—	—	—	15	16	18	—	2—60	
Ախալցխայի „	50	—	20	205	—	124	60	95	—	—	—	13	10	15	—	2—50	
Գորի „	54	—	16	210	215	145	52	—	—	—	—	10	13	14	—	2—50	
Կախեթիայի „	56	—	19	175	285	140	56	190	—	—	—	13	15	17	—	2—60	
Թիֆլիսի „	54	—	19	195	243	165	56	180	—	26	150	14	14	16	5	2—50	
Հարավ-Սևեթիա	48	—	15	200	176	100	35	—	—	—	—	11	9	14	—	2—60	
Արևելյան Վրաստ.	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	13	—	—	—	2—50	
Չուրչիլի գավ.	52	—	10	155	150	100	—	190	—	—	—	10	13	13	—	1—70	
Քուբայի „	50	—	10	194	260	172	36	—	—	—	—	10	13	14	—	1—70	
Ոգուրգեթի „	42	—	—	155	134	96	33	168	265	—	—	10	12	12	—	1—50	
Սենակի „	52	—	—	140	134	90	—	—	—	—	—	10	13	13	—	1—60	
Աջարիստանի ՍՈՂ	42	—	10	140	110	88	33	120	355	—	—	10	12	12	—	1—30	
Արևադական ՍՈՂ	52	—	16	155	120	155	51	265	355	—	—	10	13	14	—	1—55	
Արևմտյան Վրաստ.	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	10	—	—	—	—	
Վրաստանի ՍՈՂ	52	—	18	180	240	150	52	175	350	—	—	13	13	15	—	1—50	
								265				10					

բարձրացնում են անցյալ տարվա համեմատությամբ 10 տոկոսով, յեթե յեկամուտը 300 ո. ավելի յե:

11. Բամբակագործական ուսյուններում ցանած գենադերչակի (БЛЕВЕЩИНА) ցանքերը հարկվում են տվյալ շրջանի համար մշակած ջրովի ցանքերի նորմաներով: (Անդր-ժողկոմխորհի 1930 թ. մարտի 9-ի № 227 վորոշման 4 կետի համաձայն):

12. 9—10 հոդվածներով սահմանված յեկամտարերության նորմաները հրապարակելուց հետո հարկային տարվա ընթացքում փոփոխվել չեն կարող:

Բ. Դաշտամ շահույթյան յեկամուտի վորոշելը

13. Դաշտամ շահույթից ստացված յեկամուտը ինչպես անհատ, նույնպես և կուլակային և խորհրդային տնտեսությունների նկատմամբ, ՎՍՍՀ սահմաններում հաշվվում է տնտեսության մեջ փաստորեն ցանված հողի տարածության համեմատ (ըստ ցանքի): Իսկ ցանքի յեկամուտը վորոշելու համար հաշվի յե առնվում փաստորեն հացահատիկային կուլտուրայով ցանված ամբողջ տարածությունը:

Ծանոթութուն. — Առանց հարգելի պատճառների ցանքերի տարածությունը կրճատած տնտեսությունների համար դաշտամ շահույթյան յեկամուտը հաշվվում է ըստ նախորդ տարվա ցանքերի տարածության:

Գ. Մարգագործության յեկամուտը վորոշելը

14. Մարգագործության յեկամուտը վորոշելիս հաշվի յեն առնվում տնտեսության մեջ յեղած բոլոր խոտհարքները:

Դ. Անասուններից ստացած յեկամուտը վորոշելը

15. Անասունների յեկամուտը վորոշելու համար հաշվառման են յենթարկվում՝ ա) ձիերը, յեղները, դոմեշները, եչերը, ջրիները և 4 տարեկանից վեր ուղտերը. բ) 3 տարեկանից վեր ցուլերը:

գ) կովերը առաջին ծնից հետո և 3 տարեկանից վեր յերինջները:

դ) մի ձմեռ անցկացրած վորոշարներն ու ալծերը:

Անասունների տարիքը վորոշվում է մինչև հարկային տարվա մայիսի 1-ը:

ՅԵ. Գյուղատնտեսության հատուկ ճյուղերի յեկամուտը վորոշելը

16. Բանջարբուծության, պարսիկ-պանության, խաղողագործության, ալծագործության, բամբակագործության, չալտուկի և մանդարինի տունկերի յեկամուտները վորոշելիս հաշվի յե առնվում տնտեսության մեջ այդ մշակույթների բռնած տարածությունը:

Զ. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտները վորոշելը

17. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտները վորոշելիս հաշվի յեն առնվում նախորդ հարկային տարվա յեկամուտները:

18. Աշխատավարձից ստացվող յեկամուտը վորոշելիս տնտեսության հարկվող յեկամուտի կազմի մեջ են մտնում՝

ա) իրենց գյուղական տնտեսություններում մշտապես ապրող աշխատավորների աշխատավարձի 15 տոկոսը:

բ) մշտապես իրենց գյուղական տնտեսություններից դուրս ապրող աշխատավորների աշխատավարձի 10 տոկոսը:

գ) Իրսի զբաղմունքների ընթացքում վարձու աշխատանքից ստացվող յեկամուտի 15 տոկոսը:

Ծանոթութուն. — Աշխատավարձ և դրսի զբաղմունքների ընթացքում վարձու աշխատանքի վարձատրությունն ստացող քաղաքացիները պետք է հարկային տարվա հունիսի 1-ից վորոշ ուչ աշխատանքի վայրից գյուղխորհրդին տեղեկություն ներկայացնեն նախորդ հարկային տարվա մայիսի 1-ից մինչև ապրիլի 30-ը ստացած վարձատրության չափի մասին:

19. Տնայնագործական, արհեստագործական և վոչ-գյուղատնտեսական այլ յե-



կամուտները (բացի աշխատավարձից) յուրաքանչյուր տնտեսութեան համար վորոշում են շրջանային հարկային հանձնաժողովները: Ընդհանուր յեկամուտից հանվում են բոլոր տեսակի զբաղմունքների վերաբերյալ արտադրական ծախքերը՝ հումքի, վառելանյութի, կիսաֆաբրիկատների արժեքը, վարձու բանվորների աշխատավարձը և այլն:

Այս ձևով վորոշված յեկամուտը մտցվում է տնտեսութեան հարկվող յեկամուտի կազմի մեջ հետևյալ հիմունքներով՝ ա) վոչ-աշխատավորական բնույթի յեկամուտները մտցվում են ամբողջութեամբ, բ) մեքենայական շարժիչներ չունեցող բարդ գյուղատնտեսական մեքենաները վարձով տալուց ստացված յեկամուտից մտցվում է կոլլեկտիվ տնտեսութեաններում — 10 տոկոսը, անհատական տնտեսութեաններում՝ 25 տոկոսը: Տրիբները և տեսակավորող մեքենաները, ինչպես նաև գյուղատնտեսական պարզ մեքենաները վարձով տալուց ստացված յեկամուտները բոլորովին հարկման չեն յենթարկվում: գ) զրաի զբաղմունքներից ստացված յեկամուտից մտցվում է 30 տոկոսը: դ) տնայանագործական, արհեստագործական և վոչ-գյուղատնտեսական այլ յեկամուտներից՝ առանց վարձու բանվորների, համաձայն Անդրժողովորհի 1930 թ. մարտի 9-ի № 227 վորոշման, մտցվում է 50 տոկոս:

Վարձու աշխատանք չկիրառող կոոպերատիվ տնայանագործների և արհեստավորների համար այդ ձևով վորոշված յեկամուտը պակասեցվում է մեկ քառորդի չափով: Այս արտոնութեանը տարածվում է միայն այն տնայանագործների և արհեստավորների վրա, վորոնք կոոպերատիվ սիստեմի մեջ մտնող ընկերութեաններին անդամ են:

20. Կոլլեկտիվ տնտեսութեանների վոչ-գյուղատնտեսական յեկամուտները մտցվում են նրանց հարկվող յեկամուտի մեջ այն հիմունքներով, վորոնք սահմանված են անհատական տնտեսութեանների համար: Կոլլեկտիվ տնտեսութեանների անդամների կողմից, կոլլեկտիվ տնտեսութեաններից գուրս ստացված վոչ-գյուղատնտեսական յեկամուտից մտցվում է

այն մասը, վորն այդ յեկամուտներից հատկացվում է հոգուտ կոլլեկտիվ տնտեսութեանի միջոցներին:

21. Յեթե կոլլեկտիվ տնտեսութեան անդամը անհատական գյուղական տնտեսութեան չունի ապա կոլլեկտիվ տնտեսութեանից գուրս նրա ստացած վոչ-գյուղատնտեսական յեկամուտները միասնական գյուղատնտեսական հաշվի չեն յենթարկվում: այլ հարկվում են պետական յեկամտահարկի որենքի համաձայն (գուրս գալով կոլլեկտիվ տնտեսութեանից մասը): Յեթե կոլլեկտիվ տնտեսութեան անդամը ունի անհատական գյուղական տնտեսութեան, ապա նրա վոչ-գյուղատնտեսական յեկամուտները (գուրս յեկամ կոլլեկտիվ տնտեսութեանից հատկացված մասը) յենթարկվում են միասնական գյուղատնտեսական հարկին, նրա անհատական տնտեսութեանի մեջ ընդհանուր հիմունքներով:

Այն դեպքերում, յերբ կոլլեկտիվ տնտեսութեան հաշվառման ժամանակ զազարել է այն գործով զբաղվելուց, վորից նա վոչ-գյուղատնտեսական յեկամուտներ է ստացել, շրջանային հարկային հանձնաժողովը կարող է այդ յեկամուտն ազատել հարկումից:

22. Բոլոր հիմնարկները, կազմակերպութեաններն ու ձեռնարկները (պետական, կոոպերատիվ և մասնավոր) պարտավոր են հարկային մարմիններին, շրջանային գործկոմներին և գյուղխորհուրդներին, ըստ նրանց պահանջի, տեղեկութեաններ ներկայացնել միասնական գյուղատնտեսական հարկի յենթարկվող անձանց վճարված գումարների մասին: Այս դեպքում նրանք պարտավոր են մատնանշելու ստացողների անունը, հայրանունը և ազգանունը, նրանց բնակավայրը (գյուղ, շրջան և գավառ), ինչպես նաև ցույց տալ թե ինչի համար է վճարված:

Բ. Նորմաներով հաշված գյուղատնտեսական յեկամուտի վրա կատարված տոկոսային հավելումները

23 Անհատական տնտեսութեանների նոր մաներով հաշված գյուղատնտեսական յեկամուտների հարկվող գումարը իրական յեկամ

ուտին մոտեցնելու նպատակով, անհատական տնտեսութեանների համար, համաձայն Անդրժողովորհի 1930 թ. մարտի 9-ի № 227 վորոշման, սահմանվում են տոկոսային հավելումներ գյուղատնտեսութեան (այսինքն դաշտամշակութեան, մարգագործութեան, անասնապահութեան և գյուղատնտեսութեան հատուկ ճյուղերի) նորմաներով հաշված յեկամուտի գումարի վրա:

Սահմանվում են հետևյալ տոկոսային հավելումները նրանց գյուղատնտեսութեանից ստացված նորմատիվ ձևով հաշված յեկամուտի վրա:

**Հաշված յեկամուտի վրա**

Տնտեսութեան բոլոր աղբյուրներից հաշված՝ հարկվող յեկամուտի ընդհանուր գումարը	Միայն գյուղատնտեսութեան յեկամուտի վրա կատարվող հավելման տոկ.
500 ուր. ավելի մինչև 600 ո.	5 տոկոս
600 " " " 650 " "	6 " "
650 " " " 700 " "	7 " "
700 " " " 750 " "	8 " "
750 " " " 800 " "	9 " "
800 " " "	10 " "

Տոկոսային հավելումները կիրառվում են այն տնտեսութեանների նկատմամբ, վորոնց ընդհանուր հարկվող յեկամուտը 500 ուրբրուց պակաս չէ:

Մանրութիւն. — Տոկոսային հավելումները չեն կիրառվում այն տնտեսութեանների նկատմամբ, վորոնք ունեն 9 և 10 շունչ և վորոնց հարկման յենթակա ընդհանուր յեկամուտի գումարը 1 շնչի համար չի գերազանցում 60 ո. կամ 11 և 12 շունչ — մեկ շնչին՝ 70 ուրբրուց: Տոկոսային հավելումները չեն կիրառվում նաև այն տնտեսութեանների նկատմամբ, վորոնք սեփական քարչի ուժ և ինվենտար չունենալու պատճառով քարչի ուժ և ինվենտար են վարձով վերցնում:

Թ. Կուլակային տնտեսութեանների հարկվող յեկամուտը վորաշիւր

24. Այն շրջաններում, վորտեղ կուլակային տնտեսութեանները համատարած կոլլեկտիվացման կարգով դեռ չի կիրառվել չեն յենթարկված, այդ տնտեսութեանները հարկվում են իրենց իրական յեկամուտի համեմատ անհատական կարգով և վոչ թե ըստ նորմաների:

Անհատական կարգով հարկման յենթարկվող տնտեսութեանների թիւը պետք է կազմի ՎՍՍՀ գյուղացիական տնտեսութեանների ընդհանուր թիւի 2-ից—3 տոկոսը:

25. Տնտեսութեանները կուլակային են համարվում և անհատական կարգով հարկման են յենթարկվում հետևյալ հատկանիշներն ունենալու դեպքում՝

ա) յեթե տնտեսութեանը սիստեմատիկ կերպով վարձու աշխատանք է կիրառում գյուղատնտեսական աշխատանքների համար կամ տնայանագործութեան մեջ և ձեռնարկութեաններում, բացառութեամբ այն դեպքերի, յերբ վարձու աշխատանք կիրառելը բղխում է գանաղան մշակույթների առանձնահատկութեաններից և չի գերազանցում բանվորական ուժ վարձելու առավելագույն չափից: Գ

Բանվորական ուժ վարձելու առավելագույն չափը, վորն անհատական կարգով հարկելու հիմք չի ծառայում, սահմանվում է՝

Հացահատիկային շրջանների համար 35 վարձու բանվորական ուր.

Չայտուկագործական և այդեղործական շրջանների համար՝ 50 վարձու բանվորական ուր.

Բամբակագործական շրջանների համար՝ 100 վարձու բանվորական ուր.

Ծխախոտագործական շրջանների համար՝ 125 վարձու բանվորական ուր.

Անասնապահական շրջանների համար՝ մեկ հոտաղ:

Վորբերի, այրիների, հաշմանդամների և ուսանողների տնտեսութեաններում աշխատունակ տղամարդկանց բացակայութեան



դեպքում կամ յեթե աշխատունակները գըտընվում են ծառայութեան մեջ, ծանր հիւվանդներ են, մեկ մշտական վարձու բանվորի և սահմանված թվով սեզոնային բանվորների առկայութեամբ հատկանիշ չի ծառայում անհատական կարգով հարկելու համար:

բ) յեթե անտեսութեան ունի աղաց, ձիթահան, գինգ, նորմայով աշխատող ողու գործարան, ձալարաղաց, կորեկաղաց և գլխարան, կարտոֆիլի, պտուղների կամ բանջարեղենի չորանոց, կամ այլ արդյունաբերական ձեռնարկութեաններ, այն դեպքում, յերբ այդ ձեռնարկութեաններում կիրառվում է մեքենայական շարժիչ, ինչպես նաև քամու կամ ջրի ուժ:

գ) յեթե անտեսութեանը սխտեմատիկ կերպով վարձով է տալիս մեքենայական շարժիչներ ունեցող առանձին բարդ գյուղատնտեսական մեքենաներ կամ այդ մեքենաները վարձով աշխատեցնում է ուրիշ անտեսութեաններին համար:

դ) յեթե անտեսութեանը սխտեմատիկ կերպով վարձով է տալիս սարքավորված շինքերը բնակարկութեան կամ ձեռնարկութեան համար:

ե) յեթե անտեսութեանը հող է վարձակալում վարձով տվողների համար ստրկացուցիչ պայմաններով:

զ) յեթե անտեսութեանն առևտրական կամ արդյունաբերական շահագործման նրպատակով վարձակալում է պտղատու և խաղողի այգիներ և այլն:

ը) յեթե անտեսութեանն անդամները ըզբաղվում են առևտրով, վաճառութեամբ, կամ յեթե ունեն այլ անաշխատ յեկամուտներ (վորոնց թվում նաև պաշտամունքի սպասավորները):

26. Տնտեսութեաններն անհատական կարգով հարկելիս անտեսութեան յեկամուտը վորոշվում է յուրաքանչյուր ճյուղի համար առանձին, իրական չափի համեմատ:

Վոչ-գյուղատնտեսական դատումների յեկամուտները, վորոնց թվում նաև ամեն տեսակ աշխատավարձը, մտնում են անտեսութեան հարկվող յեկամուտի մեջ ամբողջութեամբ, յեթե այդ դատումներ ունեցող ըն-

տանիքի անդամներն իրենց կապը տնտեսութեան հետ չեն կտրել և նրա մեջ հողաբաժին ունեն:

27. Անհատական կարգով միասնական գյուղատնտեսական հարկի յենթարկված անտեսութեաններն իրավունք չունեն հարկային վորուե արտոնութեան ստանալու:

28. Անհատական կարգով հարկվող տնտեսութեաններին ցուցակները կազմում է նրանց յեկամուտի չափը նախապես վորոշում են գյուղական խորհուրդները: Գյուղական խորհուրդների կազմած ցուցակները և հաշված յեկամուտը պետք է քննութեան առնվի չքավորների ժողովներում: Անհատական կարգով հարկվող անտեսութեանների ցուցակները վերջնականապես հաստատում է նրանց յեկամուտը վորոշում են չրջանային հարկային հանձնաժողովները: Այս կամ այն անտեսութեանն անհատական կարգով հարկելու և յեկամուտը ձեռք վորոշելու մասին կասկածներ ծագելիս հանձնաժողովները կատարում են անտեսութեան հետազոտում:

Ճ. Կոլլեկտիվ տնտեսութեաններին յեկամուտը նրանց հաշիվների համեմատ վորոշելը

29. Այն դեպքերում, յերբ կոլտնտեսութեանը գալառական գործադիր կոմիտեյի վորոշման համաձայն հարկվում է իր հաշիվների համեմատ, հարկման համար նկատի յե առնվում նախորդ հաշիտու տարվա յեկամուտը:

Հարկվող յեկամուտ են համարվում այն գումարները, վորոնք հաշիտու տարում վճարված են կոլլեկտիվ անտեսութեանների անդամներին վորպես աշխատավարձ, ինչպես նաև հատկացված են կոլտնտեսութեանների Փոնդերին (դրամապլուխներին):

Ծանոթութեան. — Այն դեպքերում, յերբ հաշիվների համեմատ մնաս է ստացված, հարկվող յեկամուտը պակասեցվում է այդ մնասի գումարի չափով:

**ՀԱՏՎԱԾ 3.**

**Ա. Հարկը հաշիվելու կարգը**

30 Անհատական տնտեսութեաններին միասնական գյուղատնտեսական հարկը հաշ-

վվում է անտեսութեան ամբողջ յեկամուտի համեմատ, հաշիվ առնելով չնչերի թիվը:

31. Կուլակային տնտեսութեանից գյուղատնտեսական հարկը ամենուրեք հաշվվում է անտեսական յեկամուտի համեմատ, առանց չնչերի թիվը նկատի ունենալու, կուպարների առանձին աղյուսակի համաձայն:

32. Չանազան տեսակի պարզ ընկերութեանների անդամների՝ ընկերութեան մասնակցելուց ստացված յեկամուտները հարկվում են նրանց անհատական տնտեսութեաններում:

Այդ յեկամուտները հարկելու համար սահմանվում է զեղջ յեկամուտների 5 տոկոսի չափով:

Բ. Տնտեսութեան յեկամուտի համեմատ՝ շրջների քվի հաշվառմամբ հարկը շահվելիս կիրառվող կուպարների աղյուսակ

33. Տնտեսութեան ամբողջ յեկամուտի համեմատ՝ չնչերի թիվը հաշվառմամբ հարկը հաշվելիս անտեսութեան հարկվող յեկամուտի ընդհուր գումարից հանվում է յուրաքանչյուր չնչի համար 20 ուրբի, իսկ մնացորդը հարկվում է հետևյալ աղյուսակի համաձայն:—

500 ա. բարձր, մինչև	700 ա. յեկամուտից
700 »	1000 »
1000 »	3000 »
3000 »	6000 »
6000 »	— »

Գ. Կոլլեկտիվ տնտեսութեաններին և կոլլեկտիվ տնտեսութեաններին անդամ անհատական տնտեսութեաններին հարկը հաշվելը

36. Այն կոլտնտեսութեաններից, վորոնց հարկվող յեկամուտը վորոշվում է ըստ նորմաների, հարկը գանձվում է հետևյալ չափերով:—

Գյուղատնտեսական կոմմունաների հարկվող յեկամուտի յուրաքանչյուր ուրբուց— 4 կոպ. այլ կոլտնտեսութեանների հանրայնացված մասի հարկվող յեկամուտի յուրաքանչյուր ուրբուց— 5 կոպ.

36. Այն կոլլեկտիվ տնտեսութեաններից, վորոնց հարկվող յեկամուտը վորոշվում է նրանց հաշիվների համեմատ, հարկը գանձվում է հետևյալ չափերով:—

Առաջին 25 ուրբու յուրաքանչյուր ուրբուց գանձվում է 4 կ., 25 ա. մինչև 100 ա. ավելցուկի յուրաքանչյուր ուրբուց գանձվում է 7 կոպ.

100 ա. մինչև	150 ա. գանձվում է	10 կոպ.
150 »	200 »	15 »
200 »	250 »	20 »
250 »	300 »	22 »
300 »	400 »	25 »
400 »	450 »	28 »
600 «	— »	30 »

7 և 8 չունչ ունեցող անտեսութեանների հարկը զեղջվում է 5 տոկոսի չափով, 9 և 10 չունչ ունեցող անտեսութեաններին՝ 10 տոկոսի չափով, իսկ 11 և ավելի չունչ ունեցողներինը՝ 15 տոկոսի չափով:

Գ. Կուլակային տնտեսութեաններին հարկելը հաշվելու կուպարների աղյուսակը

34. Անհատական կարգով հարկվող կուլակային տնտեսութեանների հարկը հաշվելիս անտեսութեան յեկամուտի առաջին 500 ա. յուրաքանչյուր ուրբուց գանձվում է 20 կ.:

գանձվում է յուրաքանչյուր ուրբուց	30 կ.
»	40 »
»	50 »
»	60 »
»	70 »

Գյուղատնտեսական կոմմունաների հարկվող յեկամուտի յուրաքանչյուր ուրբուց— 2 կոպեկ:

Այլ կոլլեկտիվ տնտեսութեաններին հանրայնացված մասի հարկվող յեկամուտի յուրաքանչյուր ուրբուց— 3 կոպեկ:

Ծանոթութեան. — Այն դեպքերում, յերբ այս հոդվածի կարգով կոլլեկտիվ տնտեսութեան հաշված հարկը կզերպանցի հարկի այն գումարից, վոր կոլտնտեսութեանը պետք է վճարեր հարկվող յեկամուտը ըստ նորմաների վորոշելու դեպքում (36 հոդ.), հարկը իջեցվում է մինչև այդ գումարը:

37. Յեթե կոլտնտեսութեան անդամի անհատական տնտեսութեանը մնում է, ապա



այդ ՀՀանրայնացված տնտեսութեան յեկա-  
մուտը հարկվում է 33-րդ հոդվածով սահ-  
մանված աղյուսակի համաձայն, սակայն  
այս դեպքում յուրաքանչյուր շնչի համար  
սահմանված 20 ո. չի հանվում, և ՀՀարկվող  
միջինումը չի կիրարկվում:

Ե. Խարիդային տնտեսութունների հարկը  
հաշվելը

38. Խորհրդային տնտեսութունների  
հարկը ամենուրեք հաշվվում է տվյալ գա-  
վառի և Վրաստանի ՍՍՀ կազմի մեջ մտնող  
հանրապետութունների առանձին շրջաննե-  
րի ու գավառների համար սահմանված կո-  
պարի համեմատ:

ՀԱՏՎԱԾ 4

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սակավագար տնտեսութուններին տրվող  
արտոնութուններ

39. Անհատական սակավագոր տնտեսու-  
թյունների մի մասը բոլորովին ազատվում է  
հարկից ՀՀարկվող միջինումի կարգով (3  
հոդ.), իսկ մյուս մասը, վորոնց յեկամուտը  
ՀՀարկվող միջինումից բարձր է, շրջանա-  
յին հարկային հանձնաժողովների վորոշում-  
ների հիման վրա:

40. Հարկվող միջինումը, այսինքն յե-  
կամտի այն առավելագույն չափը, յերբ  
տնտեսությունն անպայման ազատվում է  
հարկից, անհատական տնտեսությունների  
համար սահմանվում է՝ տնտեսության մեջ 1  
և 2 շունչ լինելու դեպքում—110 ո., 3 և 4  
շունչ լինելու դեպքում—150 ո. յուրաքան-  
չյուր տնտեսության համար:

Ծանոթութուն. — Շրջանային հար-  
կային հանձնաժողովները կարող են չը  
հարկվող միջինումը չկիրառել ընտրա-  
կան իրավունքներից զրկված անձանց  
վերաբերմամբ:

41. Այն կողմերի տնտեսությունների  
համար, վորոնց յեկամուտը հաշվվում է  
ըստ նորմաների, ՀՀարկվող միջինումը սահ-  
մանվում է շնչին 30 ո., իսկ այն կողմերի

տնտեսությունների համար, վորոնց յեկա-  
մուտը հաշվվում է նրանց հաշվների համե-  
մատ—շնչին 60 ո.:

Ձքավորական գերակշռող կազմ ունեցող  
սակավագոր կոմմունաների համար, վորոնց  
յեկամուտը ՀՀարկվող միջինումից ավելի  
է, շրջանային հարկային հանձնաժողովնե-  
րը կարող են հարկի չափը նվազեցնել 50 տո-  
կոսով:

42. Կողմերի տնտեսությունների հարկ  
վող յեկամուտը հաշվելիս գեղջվում է կոլ-  
լեկտիվ տնտեսության այն անդամներին  
պատկանող հողի և անասունի յեկամտի 75  
տոկոսը, վորոնք նախընթաց տարում ազատ-  
վել են միասնական գյուղատնտեսական հար-  
կից, վորպես սակավագոր տնտեսություն-  
ներ:

Բ. Ցանկերի տարածութունն ընգարակե-  
լու նպատակով տրվող արտոնութուններ

43. Հարկումից ազատվում է 1928-29 թ.  
հաշվառած տարածության համեմատու-  
թյամբ 1930-31 թ. ավելացած ցանքի ամ-  
բողջ տարածությունը:

Ծանոթութուն. — Հարկից չի ազատ-  
վում ջրովի հողերում կատարված հա-  
ցահատիկային ցանքերի ավելացած տա-  
րածությունը բոլոր բամբակադործա-  
կան շրջաններում:

44. Խոպան ու խամ հողերը մշակելու  
դեպքում հարկից ազատվում են յերկու տա-  
րով: Այս արտոնությունը տրվում է միայն  
այն դեպքում, յերբ տնտեսության մեջ ցան-  
քերի ընդհանուր տարածությունը 1928-29  
թ. համեմատությամբ ավելացել է:

Գ. Բերքատվութունը բարձրացնելու նպա-  
տակով տրվող արտոնութուններ

45. Բերքատվության բարձրացման մի-  
ջոցները խրախուսելու նպատակով սահման-  
վում է հարկի 10 տոկ. գեղջ կողմերի և 5  
տոկոս գեղջ անհատական տնտեսություննե-  
րի համար, յեթե նրանք կյանքում կիրա-  
ռում են ազրոմիջինումը, այսինքն՝ բերքա-  
տվության բարձրացման պարզ ձեռնարկում  
ները (մաքուր տեսակի սերմերի գործածու-

թյուն, բոլոր սերմերի դտում, տեսակավո-  
րում և ախտահանում, շարքացան, պայ-  
քար վնասատուների և մոլախտերի դեմ,  
գարնանային հերկ, հերկված հողերում բակ-  
լային բույսեր ցանելը, աշնանը կատարվող  
վար, սևահերկ—չորային շրջաններում, աշ-  
նանը ցանված արտերում անասուններ չա-  
րածացնելը, կանաչի պարարտացում, վո-  
րոգման սիստեմները ժամանակին մաքրելն  
ու կանոնավոր վիճակում պահելը, ջրովի հո-  
ղադործության շրջաններում մշակույթները  
նորմաների համաձայն և սահմանված ժա-  
մանակին ջրելը):

Ազրոմիջինումի մեջ մտնող ձեռնարկում-  
ների ցուցակը սահմանում են գավառական  
գործադիր կոմիտեները (Արխագիայում և  
Աջարիստանում — հանրապետական Ժող-  
կոմխորհները, իսկ ինքնավար Հարավ-Ոսե-  
թիայում—կենտրոնի կոմի) և հրապարա-  
կում են ի դիտություն ընդհանուրի այս  
որենքը հրապարակելուց հետո տասը որվա  
ընթացքում: Կողմերի և անհատական արն  
տնտեսությունների համար սահմանվում են  
ձեռնարկումների տարբեր ցուցակներ, նկա-  
տի ունենալով կոլտնտեսությունը ավելի  
բարձր մակարդակի հանցելու անհրաժեշ-  
տությունը:

46. Առաջին անգամ ամբողջովին բաղ-  
մադաշտ սիստեմի անցնող տնտեսություն-  
ների համար տվյալ վայրերում սահմանված  
յեկամտաբերության նորման իջեցվում է 15  
տոկոսով կողմերի տնտեսությունների և  
10 տոկոսով անհատական տնտեսություննե-  
րի համար:

Դ. Տեխնիկական մշակույթների զարգացման  
նպատակով տրվող արտոնութուններ

47. Շաքարի, ձախնդեղի, դեղերա-  
կի, կանեփի, զենդիրի, սոյայի, գնդածաղ-  
կի, գաֆրանի և բամբի ցանքերից, թթնու-  
տնիկարաններից, կաուչուկաբեր թփերից, ա-  
րտավայրերում ու արտատեղերում գոյա-  
ցող խոտհարքներից, ինչպես նաև մեղվա-  
բուծությունից և ձագարբուծությունից  
ստացված յեկամուտները բոլորովին ազատ-  
վում են հարկից:

Ծանոթութուն. — Բամբակագոր-  
ծական շրջաններում այս հոդվածով  
սահմանված արտոնությունը չի տարած-  
վում սոյայի և դեղադեղալի ցանքերի  
վրա:

48. Բամբակի ցանքերի յեկամտաբերու-  
թյան նորմաները սահմանվում են դաշտա-  
մշակության (ցանքի) յեկամտաբերության  
նորմայի կես չափով: Բամբակի ցանքերի տա-  
րածությունը նոր շրջաններում հարկից ա-  
զատվում է ցանելուց հետո հինգ տարի չա-  
րուեակի: Բամբակի ցանքաշրջանի մեջ մտնող  
արվույտի ցանքերի տարածությունը հար-  
կից ազատվում է ցանելուց հետո մեկ տարի  
ժամանակով:

Բամբակի ցանքերի 1929-30 թ. համե-  
մատությամբ ավելացած տարածությունը  
ազատվում է հարկից, յեթե նույնիսկ արն-  
տեսության ամբողջ ցանքի տարածությունը  
ավելացած չլինի:

49. Տեխնիկական մշակույթների և խո-  
տերի սերմաբուծարանների բռնած տարա-  
ծությունը գյուղհարկի յենթակա չէ:

50. Դեղին ծխախոտի՝ 1929-30 թ. հա-  
մեմատությամբ ավելացած ցանքերի ամ-  
բողջ տարածությունը ազատվում է հար-  
կից:

Ե. Բանջարանցների զարգացման նպատա-  
կով սահմանվող արտոնութունները

51. Բանջարանցների նոր հատկացված  
ու ցանված տարածություններն այս տարի  
ազատվում են հարկից:

Զ. Կենդանաբուծության և կաթնատնտեսու-  
թյան զարգացման նպատակով տրվող ար-  
տոնութուններ

52. Կաթնամթերքներ արտադրող ներ-  
քուտ հիշված ուսյուններում արդյունաբե-  
րական շրջանների համար՝ կովերի, մա-  
տակների և ցուլերի յեկամտաբերության  
նորմաները սահմանվում են 1928-29 թ. հա-  
մեմատությամբ յերկու անգամ իջեցված  
չափով:

Թիֆլիսի շրջանի ուսյուններ՝ Ծալկայի,  
Բաշկիչետի, Ուլի, Դուչեթի (Փչալ-Սևսու-  
րեթիա), Մլեթի, Փասանաուրի, Գաղամա-



կարի և Երծո-Թիոնեթի: Կախեթի շրջանի  
նախնները՝ Սղնախի, Ջեմո-Կեդեի և Թեւա-  
վի (Մթաթուշեթի): Գորիի շրջանի՝ Բոր-  
ժոմի (Բակուրիան, Յիխիսվարի): Ախալ-  
գախի գավառի՝ Ախալքալաքի և Գորեղով-  
սկու: Քուրայիի շրջանի՝ Ունի (Բրավալ-  
Ջալա): Ռայոններ՝ Ջուզգիդի, Սենակի,  
Հանջուուտի (նախկին «Մեջոդե»-այի գոր-  
ծունեյության շրջանը): Ինքնավար Հարավ-  
Ռսեթիայի նախններ՝ Ծավիի (Կուզարո,  
Ռոկա, Ջավա, Կեմոգտա) Ախալքուրիի (Լե-  
խուրա, Մոնաստիք) և Յիխիսվարի (Բելո-  
տի), Աջարխստանի Սև Հ շրջաններ՝ Խուլիի  
Աջարխստանի Սև Հ շրջաններ՝ Խուլիի ու-  
յան և Արխագիայի Սև Հ-ում՝ Փոխու և Ա-  
ժարա շրջաններում:

53. Ներքև հիշված արդյունաբերական  
շրջաններում վոչխարներից և այծերից ըս-  
տացված յեկամտի նորմաները սահմանվում  
են յերկու անգամ պակաս հանդեպ 1928-29  
թ.: Կախեթիայի շրջանում՝ Թեւալում, Ալ-  
վան և Մթաթուշեթի, Սղնախի (ամբողջ  
նայոնը, բացառութեամբ Սնադիի ույոնի):  
Թիֆլիսի շրջանում՝ Թիֆլիսի ույոն (Ղարա  
յաղում), Բորչալուի (Մարվան, Գյուլ-  
բարի, Բայդար, Ինձուրչի-Հասանլո և Ղա-  
շաղան), Խեիի և Գուշեթի շրջաններում՝  
(Գուզամակարի և Մլեթի):

54. Գյուղատնտեսական միասնական  
հարկից խոշոր յեղջուրավոր անասունների  
ամբողջ աճը (կովերի, յեզների, ցուլերի,  
ղոմեշների, ինչպես և մանր անասունների):  
Ձիերի աճը ազատվում է հարկումից այն  
ուայոններում, ուր նրանք հանդիսանում են  
հիմնական քարշի ույթը: Այս ուայոնները  
վորոշվում են Վրաստանի Ժողկոմխորհի  
հատուկ վորոշումով:

55. Անասնապահութեան բարելավման  
միջոցները խրախուսելու նպատակով սահ-  
մանվում է հարկը տասը տոկոս գեղջ կու-  
լեկտիվ և հինգ տոկոս գեղջ անհատական  
անտեսութեյոնների համար, յեթե նրանք  
կյանքում կիրառում են գոմիխիմումը,  
այսինքն՝ կենդանաբուծութեան բարելավ-  
ման վերաբերյալ պարզ ձեռնարկումները:

(անասուններին կանոնավոր կերակրելն ու  
պահելը, ամառային լրացուցիչ կեր, հա-  
սարակական գուզավորման կայանների  
կազմակերպում, մատղաշների կանոնավոր  
խնամում, անասունների հասարակական  
կերակրման կազմակերպում, խոտհարքերի  
և արոտավայրերի բարելավման վերաբեր-  
յալ մելիորատիվ աշխատանքներ և այլն):

2006 ինիցիատիվների մեջ մտնող ձեռնար-  
կումների ցուցակը սահմանվում է այս  
վորոշման 45-րդ կետում նախատեսված  
կարգով:

56. Հարկումից ազատվում են՝ ա) ազ-  
նվացեղ անասունները և բոլոր տեսակի  
գյուղատնտեսական կենդանիների՝ հավա-  
նութեյոն ստացած արտադրողները կուլեկ-  
տիվ և անհատական անտեսութեյոններում  
բ) ազնվացեղ և հավանութեյոն ստա-  
ցած արտադրողները բոլոր խորհրդային  
անտեսութեյոններում:

գ) ցեղական բուծարանների անասուն-  
ները:

դ) պետական կամ տեղական բյուջեյի  
հաշվով պահվող ցեղական անտեսութեյոն-  
ները:

57. Կուլեկտիվ և բոլոր անհատական  
անտեսութեյոններում, բացի կուլակային  
անտեսութեյոններից, ազատվում են մերի-  
նոս և նրբամազ վոչխարները և նրանց մե-  
տիաները, ինչպես նաև կխակոշտարուրդ  
վոչխարները:

59. Պետական ձիաբուծարաններն ա-  
զատվում են հարկից:

60. Յանովի խոտի և կերի արմատա-  
պտուղների բուսած տարածութեյոններն ա-  
զատվում են հարկից:

Ձրովի հողերի վրա այդ արտոնու-  
թեյոնները չեն տարածվում:

61. Գյուղատնտեսական միասնական  
հարկից ազատվում են արոտատեղերի և  
խոտհարքի հողամասերը:

62. Հարկից ազատ են մեղվաբուծու-  
թեյոնից, թռչնաբուծութեյոնից և ճագա-  
րաբուծութեյոնից ստացված յեկամուտնե-  
րը:

2. Արտոնութեյոններ բանջարաբուծու-  
թեյոնը գարի տալու համար

63. Բանջարաբուծութեյոն տրամա-  
դրված նոր հողամասերը մի ամբողջ տարի  
ազատվում են հարկումից:

64. Բանջարաբուծական բույսերի սեր-  
մացուի համար տրամադրված տարածու-  
թեյոնները ազատվում են հարկից:

Ը. Խորհրդային տնտեսութեյոններին տրը-  
վող արտոնութեյոններ

65. Նոր կազմակերպվող խորհրդային  
անտեսութեյոնները (հացահատիկային,  
բամբակագործական, կենդանաբուծական  
և այլն) ազատվում են հարկից կազմա-  
կերպվելու օրից հինգ տարի շարունակ:

Թ. Փորձական և ցուցադրական տնտեսու-  
թեյոններին տրվող արտոնութեյոններ

66. Ամբողջովին պետական կամ տեղա-  
կան միջոցներով պահվող փորձացուցա-  
դրական անտեսութեյոնները, ինչպես նաև  
ուսուցման - ցուցադրական նշանակու-  
թեյոն ունեցող հասարակական ցանքերն  
ազատվում են հարկից:

Ժ. Բ. Գ. Կարմիր բանակի (նույն քվում  
ՄՊՔՎ գործառնների և ուղեկցորդ պահա-  
կախներին) զինվորական ծառայողներին,  
պահեստի զինապարտներին և հաշմանդամ-  
ներին, ինչպես նաև ուղևորակազմում պահ  
պանութեյոն և ուղևորակազմում հրդեհա-  
յին պահպանութեյոն մեջ ծառայող անձանց  
տրվող արտոնութեյոններ

67. Մտորե բերվող տախտակի մեջ  
մատնանշված արտոնութեյոնները տրվում  
են այն անտեսութեյոններին, փորոնց կազ-  
մի մեջ մտնում են՝

ա) Մշտական (անընդհատ) կամ գե-  
րագետիկ ծառայութեյոն շարքային և կրտ-  
սեր հրամանատարական կադրային զինու-  
թական ծառայողները, հաշմանդամ հարկա-  
յին տարվա աշնանը գորակոչվածներին:

բ) Մշտական (անընդհատ) կամ գե-  
րագետիկ ծառայութեյոն շարքային և կրտսեր

հրամանատարական կազմի կադրային և  
պահեստի զինվորական ծառայողները:

գ) Մահմանված հավաքներին կամ նա-  
խադիմակոչային կամ արտագործային պա-  
րտավորները զեկավարելու համար վոր-  
պես հրահանգիչներ կանչված՝ յերկարա-  
տե արձակուրդում, յերկրային մասերի  
փոփոխական կազմում և պահեստում գրտ-  
նվող միջին, բարձր և բարձրագույն հրա-  
մանատարական կազմին պատկանող ան-  
ձինք:

դ) Յերկարատե արձակուրդից յերկ-  
րային մասերի փոփոխական կազմը փո-  
խադրված կրտսեր հրամանատարական  
կազմի զինվորական ծառայողները:

ե) Նախընթաց հարկային տարվա մար-  
տի մեկից հետո յերկարատե արձակուրդ  
ստացած և ի պահեստ կամ ծառայութեյոն-  
նից բոլորովին արձակված՝ այս հոգվածի  
«ա» և «բ» կետերում հիշված անձինք:

զ) Հաշմանդամութեյոն առաջին, յերկ-  
րորդ և յերրորդ խմբերին պատկանող պա-  
տերազմի և աշխատանքի հաշմանդամները,  
յեթե անտեսութեյոն անաշխատ յեկա-  
մուտներ չունի:

կ) Պետական առանձին նշանակութեյոն  
ունեցող ձեռնարկութեյոնների և կառուց-  
վածքների ուղևորականացված պահպանու-  
թեյոններում և ուղևորականացված հրդեհա-  
յին պահպանութեյոն մեջ ծառայող անձինք  
(մասնավորապես հաղորդակցութեյոն ճանա-  
պարհների ուղևորականացված պահպանու-  
թեյոն մեջ ծառայող անձինք):

Բ. Գ. Կարմիր բանակի (նույն թվում  
ՄՊՔՎ գործառնների և ուղեկցող պահակա-  
խմբերի) զինվորական ծառայողներին, պա-  
հեստի զինապարտներին և հաշմանդամնե-  
րին, ինչպես նաև ուղևորականացված պահ-  
պանութեյոն և ուղևորականացված հրդեհա-  
յին պահպանութեյոն մեջ ծառայող ան-  
ձանց տրվող արտոնութեյոնների տախ-  
տակ:

(Տախտակը տես յերես 16):  
Ծանոթութեյոն. — Յերես այս հոդ-  
վածի «դ» կետում մատնանշված ան-  
ձինք կանչված են հավաքների, կամ



Տնտեսութեան համար սահմանված հարկի դումարը	Ձեռք բերված հարկի տոկ.	
	Յեթն տնտեսութեան համար սահմանված հարկի տոկ.	Յեթն տնտեսութեան համար սահմանված հարկի տոկ.
Մինչև 10 ու. . . . .	100 %	100 "
10 ու. ալեկի մինչև 15 ու. բլի . . . . .	75 "	90 "
15 ու. " " 20 " . . . . .	50 "	75 "
20 ու. " " 30 " . . . . .	35 "	50 "
30 ու. " " 50 " . . . . .	25 "	35 "
50 ու. " " 75 " . . . . .	15 "	25 "
75 ու. " " 100 " . . . . .	5 "	10 "
100 ու. . . . .	5 "	5 "

վորպես հրահանգիչներ հունվարի մեկից հետո, տնտեսութեան արտոնութեան ե ստանում վոչ թե տվյալ, այլ հետևյալ հարկային տարում:

68. 63-րդ հոդվածում մատնանշված անձինք մտնում են տնտեսութեան շնչերի կազմի մեջ:

69. Յեթն կողմերի տնտեսությունների կազմի մեջ մտնում են 63-րդ հոդվածով մատնանշված անձինք, ապա տնտեսության հարկվող յեկամտի ընդհանուր գումարից հանվում է այդ անձանց ընկնող յեկամտի գումարը:

70. Այն կողմնտնտեսություններում, վորոնք իրենց անդամների կազմի մեջ են ընդունել շարքային և հրամատարական կազմային կազմի գինվորական ծառայողներ Բ. Գ. Կարմիր բանակի յերկրային մասերի կրտսեր հրամանատարական փոփոխական կազմի գինվորական ծառայողներ, հարկվող գումարից հանվում են գինվորական ծառայողներին ընկնող յեկամտի գումարները մատնանշված գինվորական ծառայողներին ընդունելուց հետո յերկու տարի շարունակ:

Այս արտոնութեանը չի կիրառվում համարած կողմերի վաճառման շրջաններում:

72. Այն տնտեսություններում, վորոնք կազմի մեջ մտնում են գինվորական ծառայողներ կամ պահեստի գինապարտներ, վորոնք կանչված են նրանց համար սահմանված ուսուցման և հավաքների, հարկի այն մասը, վորի վճարման ժամկետը լրանում է ուսուցման և հավաքի ժամանակամիջոցում, հետաձգվում է այդ անձանց վերադառնալուց հետո մեկ ամիս ժամանակով: Այդ ժամանակի համար տույժ չի գանձվում:

73. 67-72-րդ հոդվածների համաձայն, արտոնութեաններ վայելող տնտեսությունները չեն զրկվում այս կանոնադրութեամբ նախատեսված այլ արտոնութեաններ վայելելու իրավունքից:

**Խ. Գաղթողներին տրվող արտոնութեաններ**

74. Պլանային կարգով նոր վայրեր դադարող կողմերի տնտեսություններին տրվում են հետևյալ արտոնութեանները՝

ա) այն տնտեսությունները, վորոնք գաղթել են այնպիսի վայրեր, վորտեղ տնտեսություն կազմելու համար պահանջվում է կոնդաճանութեան և մեկտրատիվ այլ աշխատանքների միջոցով մշակելի հողեր պատրաստել, ազատվում են հարկից տեղափոխվելուց հետո վեց տարի շարունակ:

բ) այն տնտեսությունները, վորոնք գաղթել են այնպիսի վայրեր, վորտեղ տնտեսություն կազմակերպելու համար պահանջվում է խամ հողեր մշակել, ազատվում են հարկից տեղափոխվելուց հետո 4 տարի շարունակ:

գ) այն տնտեսությունները, վորոնք գաղթել են այնպիսի վայրեր, վորտեղ չի հանձնվում խամ հողեր մշակել, հարկից ազատվում են տեղափոխվելուց հետո յերեք տարի շարունակ:

75. Գաղթի կանոնների կարգով մինչև 1930 թ. հունվարի մեկը նոր վայրեր գաղթած անհատական տնտեսություններին տրվում են հետևյալ արտոնութեանները՝

1000  
10582

ա) այն տնտեսությունները, վորոնք գաղթել են այնպիսի վայրեր, վորտեղ տնտեսություն կազմակերպելու համար պահանջվում է կոնդաճանութեան և մեկտրատիվ այլ աշխատանքների միջոցով մշակելի հողեր պատրաստել, ազատվում են հարկից տեղափոխվելուց հետո հինգ տարի շարունակ:

բ) այն տնտեսությունները, վորոնք գաղթել են այնպիսի վայրեր, վորտեղ տնտեսություն կազմակերպելու համար պահանջվում է խամ հողեր մշակել, ազատվում են հարկից տեղափոխվելուց հետո 3 տարի շարունակ:

76. 1930 թ. հունվարի մեկից հետո գաղթած անհատական տնտեսություններին հարկային արտոնութեաններ տալու հարցը և արտոնութեանների ծավալը վորոշվում է առանձին:

77. Այն դեպքերում, յերբ գաղթած տնտեսությունը յենթարկվել է տարբերային աղետի, համապատասխանորեն ալեկայցվում է արտոնութեաններ վայելելու ժամանակամիջոցը:

78. Գաղթողների համար սահմանված արտոնութեանները տարածվում են նաև՝

ա) այն ներգաղթողների և արտագաղթողների վրա, վորոնք անձամբ աշխատում են գյուղատնտեսության ասպարեզում:

բ) նստակյաց աշխատանքի անցնող գնչուների վրա, յերբ նրանց հող է հատկացվում գյուղական վայրերում:

**Լ. Տարբերային աղետներից տուժած տնտեսություններին տրվող արտոնութեաններ**

79. Տարբերային աղետներից տուժած տնտեսություններին հարկից լիովին կամ մասամբ ազատում են շրջանային հանձնաժողովները, նայած տնտեսության կրած ընդհանուր վնասի չափին և տնտեսության կարողութեան:

**Խ. Կուլակային բռնութեանից տուժածներին տրվող արտոնութեաններ**

80. Կուլակության դեմ կատարած յուլիսների համար կուլակների կողմից ըս-

պանված անձանց այրերին ու անչափահաս զավակներին պատկանող աշխատավորական տնտեսություններն ազատվում են միևնույն կանց գյուղատնտեսական հարկից այդ անձանց մահից հետո հինգ տարվա ընթացքում:

**Այլ արտոնութեաններ**

81. Պաշտոնական պարտականութեանների կատարման միջոցին կամ կատարման հետևանքով սպանված անտառային աշխատողների այրիների և անչափահաս զավակների աշխատավորական տնտեսություններն ազատվում են հարկից այդ աշխատավորների սպանվելուց հետո հինգ տարվա ընթացքում:

82. Իրենց հոգաբարձութեան կամ խնամակալութեան տակ յերեխաներ և նրանց գույքերն ընդունած անձանց տնտեսությունները հոգաբարձութեան և խնամակալութեան սահմանելու որից յերեք տարի շարունակ ազատվում են խնամակալների բաժին հողամասերի և նրանց պատկանող անասունների յեկամտեանների հարկից:

Վորբերը մտնում են խնամակալի կամ հոգաբարձույի տնտեսության շնչերի թվի մեջ:

Այս արտոնութեանները կիրարկվում են միայն այն դեպքում, յերբ խնամակալները կամ հոգաբարձուները վորբերի հետ միասին են ապրում և միատեղ տնտեսություն են վարում:

83. Գյուղացիական ծխերի և կողմերի տնտեսությունների այն լրացուցիչ հոգամասերը, վորոնք հատկացվում են գյուղատնտեսական աշխատանքի պատրաստվելու նպատակով մանկատաններից ընդունված սաների համար, հարկից ազատվում են այդ հոգամասերը հատկացնելուց հետո յերեք տարի շարունակ:

84. Հարկից ազատվում են՝

ա) գյուղական հասարակութեան համախոսականների հիման վրա հասարակական Փոնդից դատված հոգամասերում այդ հասարակությունների միջոցներով անձնանման յեկամտեանները կազմակերպելու նը-



պատակով կատարված հասարակական ցանքերը.

բ) շրջանային ֆոնդից դատված և փոխադարձ ոգնութեան գյուղացիական ընկերութեանների և նրան համապատասխանող կազմակերպութեանների կողմից իրենց նրպատակների համար ոգտադործվող հողամասերի վրա կատարված հասարակական ցանքերը.

գ) կուլտուր-լուսավորական հաստատութեանների պարենային կրթիքների բավարարման համար կատարված հասարակական ցանքերը.

դ) գյուղացիների, մանկական հրապարակների, կալանատների (վորոնց թվում և աղատութեանից զրկվածների աշխատանքային գաղութները), ինչպես նաև հասարակական և արհեստակցական հիմնարկութեանների ու կազմակերպութեանների հաշվին պահվող բժշկական հաստատութեան տնտեսութեանները:

ե) մանկատների սաների և անապատան չեքեխանների կարիքների ծառայող ուսումնա-արտադրական տնտեսութեանները:

ՀԱՏՎԱԾ 5

Հարկ վճարելու ժամկետները

85. Գյուղատնտեսական միասնական հարկը վճարվում է հետևյալ ժամկետներում.

- 1-ին ժամկետ մինչ հոկտ. 1-ը հարկի 30 %
- 2-ին ժամկետ մինչ դեկտ. 1-ը հարկի 50 %
- 3-ին ժամկետ մինչ հունվ. 1-ը հարկի 20 %

Սանրոքային Արխագիայի ՍԽՀ համար սահմանվում է հարկի վճարման հետևյալ ժամկետները.

- 1-ին ժամկետ մինչ դեկտ. 1-ը հարկի 20 %
- 2-ին ժամկետ մինչ փետր. 1-ը հարկի 60 %
- 3-ին ժամկետ մինչ մարտի 1-ը հարկի 20 %

86. Անհատական տուրք վճարող կուլակային տնտեսութեանների համար գյուղատնտեսական հարկի վճարելու համար ժամկետ սահմանվում է 1930 թ. հոկտ. 1-ը,

բացառությամբ ծխախոտադործական և բամբակադործական ուսյուններից, ուր կուլակային տնտեսութեաններից հարկը դանձելու համար ժամկետ է դրվում 1930 թ. դեկտեմբերի 1-ը:

87. Այս ժամկետների մասին, նրանց հրատարակելուց անմիջապես հետո, հայտարարվում է գյուղական հավաքութեաններում, նրանք մտցնում են հարկաթերթիկները մեջ և ամբողջ հարկահավաքման տարվա ընթացքում փոփոխման չեն յենթարկվում:

Հատված 6.

Հարկ գանձող մարմիններին դիմումներ ու գագատներ տալու յեվ քննելու կարգը յեվ միասնական գյուղատնտեսական հարկի կանոնադրուքյան կատարման պատասխանատվուքյան

88. Գյուղական վայրերում գյուղհարկի կամպանիան կիրառելու պարտականութեանը դրվում է գյուղխորհուրդների և շրջանային գործկոմիտեների վրա, իսկ քաղաքատիպ վայրերում՝ քաղխորհուրդների վրա:

89. Գյուղխորհուրդների վրա դրվում են հետևյալ պարտականութեանները.

- ա) գյուղատնտեսական հարկի գյուղացուցակների կազմումը և յեկամտի աղբյուրների ու շնչերի հաշվառումը.
- բ) հարկատուներին հարկաթերթեր հանձնելը.
- գ) շրջկոմիտեների հատուկ հանձնարարութեամբ անպարտաճանաչ հարկատուների հարկը դանձելու համար հարկադիր միջոցներ գործադրելը:

90. Գյուղհարկի կամպանիան կիրառելու համար, ամենուրեք գյուղխորհուրդներին կից կազմակերպվում են վերապես օժանդակ մարմիններ, գյուղհաշվառու հանձնաժողովներ գյուղխորհուրդի նախագահութեամբ և Գյուղփոկի նախագահի ու գյուղի համայնքի կողմից ընտրված մեկ ներկայացուցչի անդամակցութեամբ:

91. Գյուղահաշվառու հանձնաժողովների վրա դրվում են հետևյալ պարտականութեանները.

ա) գյուղատնտեսական հարկի գյուղացուցակների կազմումը և յեկամուտների աղբյուրների ու շնչերի հաշվառումը.

բ) յուրաքանչյուր տնտեսութեան վոչ-գյուղատնտեսական զբաղմունքների նախնական վորոշումը.

գ) անհատական կարգով հարկվող տնտեսութեանների նախնական ցուցակը կազմելը և յեկամուտների վորոշելը.

դ) հարկատուների դանդառների, նաև արտոնութեանների ու զեղչերի մասին յեզրակացութեաններ տալը:

92. Շրջանային գործադիր կոմիտեների վրա դրվում են հետևյալ պարտականութեանները.

ա) գյուղխորհուրդների կողմից կազմված գյուղացուցակների և կատարած հաշվառման ճշտութեան ստուգումը.

բ) յեկամտի աղբյուրները (հողը, անասունները և այլն) հարկը դանձող մարմիններից թաղցնելու համար, այս կանոնադրութեան 100-րդ հոդ. համաձայն, սուղանքը նշանակելը.

գ) գյուղհարկը դանձելու համար հարկադիր միջոցներ գործադրելը.

դ) հարկերն ընդունելը և հարկեր ընդունող հիմնարկութեաններին փոխադրելը.

ե) գյուղհարկի գերավճարները վերադարձնելը և հաշվակցելը.

զ) առանձին հարկատուների անձնական հաշիվները, ինչպես նաև ամբողջ գյուղհարկի հաշվետվութեանը և հաշվապահութեանը վարելը.

ը) շրջանի սահմաններում հարկի դանձման աշխատանքների ընդհանուր զեկամարութեանը.

93. Շրջանային գործկոմիտեներին կից կազմակերպվում են գյուղհարկային հանձնաժողովներ հետևյալ կազմով.

ա) նախագահ — շրջգործկոմի նախագահը.

բ) շրջանային գործկոմի ֆինմասի վարիչը.

գ) հողային մարմնի աշխատակիցը.

դ) համապատասխան արհեստակցական կազմակերպութեան ներկայացուցիչը.

ե) շրջանային կուլտեսութեան վարչութեան անդամը.

զ) յեկու գյուղացի, վորոնցից մեկը նըշանակվում է ՓՈԿ-ի կողմից, իսկ մյուսն ընտրվում է համապատասխան գյուղի համայնքի կողմից:

Գյուղհամայնքի ընտրած ներկայացուցիչները մասնակցում են միայն իրենց գյուղի գյուղհարկին վերաբերող հարցերին:

94. Քաղաքային վայրերում, ուր գործադրվում է միասնական գյուղատնտեսական հարկումը. քաղխորհուրդներին կից կազմվում են գյուղմիասնարկի հանձնաժողովներ պրեզիդիումի նախագահի կամ վորեև անդամի նախագահութեամբ, վորոնց կազմի մեջ մտնում են տեղական ֆինանսական որդանի, քաղաքային հողամասերի վարչութեան, հողանտառ արհմիութեան և հարկ վճարողներից մեկական ներկայացուցիչներ:

95. Շրջանային և քաղաքային վայրերի գյուղհարկահանձնաժողովների վրա դրվում են հետևյալ պարտականութեանները.

ա) պարզել հարկատուների վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից ստացած յեկամուտների գումարները և վերջնականապես վորոշել նույն տնտեսութեանների ընդհանուր հարկվող յեկամտի գումարը.

բ) հաստատել անհատական կարգով հարկվող տնտեսութեանների վերջնական ցուցակը և վորոշել նրանց յեկամուտը.

գ) բնական աղետներից վնասված տրտեսութեանները բոլորովին կամ մասամբ ազատել հարկից.

դ) յեկամտի աղբյուրների սխալ հաշվառման, յեկամտի գումարների սխալ հաշվարկման և սխալ հաշված հարկի դեմ տրված դանդառների քննութեանը և լուծումը (բացի խորհրդային տնտեսութեանների կողմից տրված դանդառներից) և

ե) որենքով նախատեսված բոլոր զեղչերի և արտոնութեանների կիրառումը:

96. Գյուղմիասնարկային հանձնաժողովներ կազմակերպվում են Արխագի-



այի և Աջարիստանի ժողովուրդներին և ինքնավար Հարավ-Ռսեթիայի Կենտրոնական կից, ինչպես նաև շրջանային և դա-  
վառային բոլոր գործկոմիտեներին կից հետե-  
յալ կազմով՝

ա) նախագահ — համապատասխան  
հանրապետության ժողովուրդների կամ  
գործկոմի կողմից նշանակված:

բ) մեկական ներկայացուցիչ՝ Ֆինան-  
սական, հողային և վիճակագրական ուր-  
գանների, ինչպես նաև արհեստակցական  
միջավայրի ներկայացուցիչները կողմից:

գ) տեղական փոփոխ նախագահը:  
դ) կոլլեկտիվ տնտեսությունների ներ-  
կայացուցիչը:

97. Նախորդ հոդվածում հիշված հանձ-  
նաժողովների վրա դրվում են հետևյալ  
պարտականությունները՝

1) նախապես քննել և յեղրակացու-  
թյուն ներկայացնել համապատասխան  
դավադրված կամ ժողովուրդներին հետե-  
յալ հարցերի մասին:

ա) գյուղական և շրջանային յեկամը-  
տարբերության նորմաներ սահմանելու մա-  
սին:

բ) զանազան տեսակի բանջարանոցների  
և պտղատու յգիների համար զանազան նոր-  
մաներ մշակելու մասին:

2) յուճեկ համապատասխան ղեկըն-  
թում ստորադաս գյուղհարկային հանձնա-  
ժողովների վորոշումների դեմ տրված դան-  
զանները հակոդություն կարգով:

98. Հարկման յենթակա յեկամուտները  
հաշվելու, հարկը հաշվելու, հարկաթեր-  
թերը և անձնական հաշիվները կազմելու  
աշխատանքները դրվում են շրջանային  
գործադիր կոմիտեների վրա:

Ծանոթություն. — Դավադրված-  
ներին յերազույց է վերապահվում ան-  
հրաժեշտ ղեկընթում այս հոդվածով  
սահմանված պարտականությունները  
դնել դավՖինրաժինների վրա, նախա-  
պես համաձայնեցնելով հարցը Ֆին-  
ժողովմասին հետ:

99. ՎՍՍՀ ժողովուրդներին կից կազ-  
մակերպվում է գյուղատնտեսական հար-  
կի հանրապետական հանձնաժողով, ժող-  
կոմիտեների կողմից հասուկ նշանակված  
կազմով:

100. Հանրապետական գյուղհարկահան-  
նաժողովը պարտավորվում է՝ նախապես  
քննել և յր յեղրակացությունները ժող-  
կոմիտեներին ներկայացնել հետեյալ հարցե-  
րի շուրջը՝

ա) քաղաքային վայրերի ցուցակները  
կազմելիս, այն վայրերի, վորոնց մեջ բը-  
նակվողները դրադվում են գյուղատնտե-  
սությունը և յենթակա յեն հարկման, յնչ-  
պես և այդ նույն անձանց հարկի կատե-  
գորիան վորոշելու մասին:

բ) առանձին աղբյուրներից ստացած  
յեկամտի նորմաները վորոշելու մասին:

գ) գյուղմիասահարկի հարկերի դանձ-  
ման ժամկետներ նշանակելու շուրջը:

դ) բերքատուլությունը բարձրացնելու  
և անասնապահությունը լավ դրության  
հասցնելու համար ձեռք առնվելիք միջոցա-  
ուումների մասին:

Հատված 7.

Գյուղմիասահարկի վերաբերյալ դիմումներ  
և գանգատներ ներկայացնելու կարգը

101. Անհատական և կոլլեկտիվ տնտե-  
սությունները հարկի վերաբերյալ բոլոր  
դիմումներն ու դանդառները տալիս են  
շրջանային գործադիր կոմիտեներին, վորոնք  
պարտավոր են անհապաղ հանձնելու շըր-  
ջանային հարկային հանձնաժողովներին յը-  
քնություն: Շըրջանային հարկային հանձ-  
նաժողովների վորոշումների դեմ կարող է  
դանդատ տրվել վերադաս հարկային հանձ-  
նաժողովներին անմիջաբար, վորոնց վորո-  
շումները վերջնական են:

Հարկային հանձնաժողովները պարտա-  
վոր են ստացված դիմումներն ու դանդատ-  
ները քննել տրվելու որից մեկ ամսվա ըն-  
թացքում:

102. Դիմումներ և դանդառներ տալու  
համար սահմանվում են հետեյալ ժամանա-  
կամիջոցները՝

ա) յեկամտի աղբյուրները և շնչերի  
թիվը սխալ հաշվառման յենթարկելու դեմ  
տրվող դանդառները, այլև արտոնություն  
ներ ստանալու վերաբերյալ դիմումները,  
բացի տարբերային աղետների ղեկընթից,  
պետք է տրվին հարկաթերթերը վճարո-  
ղին հանձնելուց հետո մեկ ամսից վոչ ուշ:

բ) տարբերային աղետների հետևանքով  
արտոնություններ պետք է տրվեն աղետից  
հետո մեկ ամսվա ընթացքում:

103. Դիմումներ և դանդառներ տալը  
չի դադարեցնում հարկի դանձումը:

ՀԱՏՎԱԾ 8.

Գյուղատնտեսական միասնական հարկի կա-  
նոնադրության կիրառման պատասխանա-  
տուլությունը:

104. Ռայոնական գործադիր կոմիտե-  
ների ու գյուղխորհուրդների վրա պա-  
տասխանատուլություն է ընկնում հետե-  
վել հարկման յենթակա աղբյուրների ճիշտ  
հաշվառքին, անտեսություն մեջ գտնվող  
բերանի քանակին և հարկի դումարի ճիշտ  
վորոշմանը հարկաթերթիկները ժամանա-  
կին տերերին հանձնելու և հարկի ժամա-  
նակին դանձնելուն:

105. Յեկամտի աղբյուրը (հող, անա-  
տուն և այլն) հարկահապաք որդաններից  
թագցնողները տուգանվում և պատասխա-  
նատուլության են կանչվում դատարանի մի-  
ջոցով, ադմինիստրատիվ կարգով:

Տուգանում են ուայոնական գործկոմ-  
ները:

Տուգանքի դումարը չալտի յինի հինգ  
անդամից ավելի այն դումարից, վորը  
թագցրվել է:

Շըրջանային գործադիր կոմիտեների՝  
տուգանելու վերաբերյալ վորոշումների  
դեմ կարելի յե դանդատ տալ դավառա-  
կան գործադիր կոմիտեներին, վորոնց վո-  
րոշումները վերջնական են:

Ծանոթություն. — Աբխազիայում,  
Աջարիստանում և ինքնավար Հարավ-  
Ռսեթիայում դանդառները ներկայաց-  
նվում են համապատասխան հանդա-

պետական կամ շըջանային գյուղմիաս-  
հարկի հանձնաժողովին:

106. Հրապարակված ժամկետներին  
հարկը չվճարող հարկատուների նկատ-  
մամբ կիրառվում են հարկերի դանձման  
կանոնադրությամբ նախատեսված միջոց-  
ները: Մասնավորապես, հարկը չվճարող-  
ների դույքը ցուցակագրվում և վաճառ-  
վում է աճուրդով, յակ հարկն ուշացնելու  
դեպքում յուրաքանչյուր ուշացած ուլա  
համար տույժ է դանձվում, 0,2 տուկոսի  
չալտով:

ՀԱՏՎԱԾ 9.

Այս կանոնադրության կիրառման վերա-  
բերյալ վորոշումներ և հրահանգներ

107. Այս կանոնադրության կիրառման  
վերաբերյալ բոլոր հրահանգների և կանոն-  
ների հրատարակման պարտականությունը  
դրվում է ՎՍՍՀ Ֆինանսների ժողովը-  
րական կոմիտեների վրա:

108. Վրաստանի ՍՍՀ Ֆինանսների ժո-  
ղովրդական կոմիտարիատը ղեկավարվում  
է գյուղատնտեսական միասնական հարկի  
կանոնադրությամբ, ներկա վորոշումով և  
ՍՍՀՄ և ԱՍՍՖՀ Ֆինանսների ժողովրդա-  
կան կոմիտարների հրատարակած հրա-  
հանգով:

ՀԱՏՎԱԾ 10.

ՎՍՍՀ ժողովրդական կոմիտարների յար-  
կրդի արդեն ուժը կորցրած վորոշումների  
մասին:

109. Ներկա վորոշումը գործի դնելու  
որից կըրցնում են յրենց ույժը Վրաստանի  
ժողովուրդների հետեյալ վորոշումները՝

ա) 1929 թ. մարտի 29-ի վորոշումը  
«Վրաստանի ՍՍՀ սահմաններում 1929-30  
գյուղատնտեսական միասնական հարկի  
անցկացնելու մասին» (ՎՍՍՀ որենքների  
ժողովածու, 1929 թ. համ' կետ 60)

բ) 1929 թ. մայիսի 21-ի վորոշումը Մ-  
րացումներ ու փոփոխություններ 1929-30  
թ. Վրաստանի սահմաններում անցկացնե-



լիք գյուղատնտեսական կերպարան» (ՎՍՍՀ որենք. ժողով. 1929 թ. համ. կետ 117) :

դ) 1929 թ. մայիսի 21-ի վորոշումը «ակնհայտ կուլակային տնտեսությունների մասին, վորոնց վրա չեն արձարծվում գյուղատնտեսականի § 44-ի «ա» և «բ» կետերի արտոնությունները (ՎՍՍՀ Որենք. ժողովածու, 1929 թ. համ. 12 կետ 118) :

դ) 1929 թ. հոկտեմբերի 11-ի վորոշումը, «1929-30 թ. վրաստանի սահմաններում անցկացնելիք գյուղատնտեսականի 8-րդ կետի հավելման մասին (ՎՍՍՀ Որ. ժող. 1929 թ. համ. 21, կետ 245)

յե) 1929 թ. նոյեմբերի 1-ի վորոշումը — վրաստանի վոչխարաբուծական տնտեսություններին գյուղատնտեսական խնդրում արտոնություններ տալու մասին» (ՎՍՍՀ Որ. ժող. 1929 թ. համ. 22 կետ 276) .

զ) 1929 թ. դեկտեմբերի 3-ի վորոշումը — 1929 30 թ., վրաստանի սահմաններում անցկացնելիք գյուղատնտեսականի կանոնադրության 42-րդ կետի խմբագրման փոփոխությունների մասին» (ՎՍՍՀ Որ. ժող. 1929 թ. համ. 24, կետ 307) :

ե) 1929 թ. դեկտեմբերի 10-ի վորոշումը — 1929-30 թ. վրաստանի տերրիտորիայում գյուղատնտեսական միասնական հարկի կանոնադրության մեջ մտցնելիք լրացումների և փոփոխությունների մասին» (ՎՍՍՀ Որ. ժող. 1929 թ. համ. 24 կետ 310) :

վրաստանի Սև Հ ժողովրդական  
Կոմիսարների խորհրդի  
նախագահ՝ Ֆ. ՄԱՆԱՐԱՋԵ

ՎՍՍՀ ժողովրդական Կոմիսարների  
խորհրդի գործերի վարիչ՝  
Պ. ՄԵԳՐԵԼԻՇՎԻԼԻ



Գրքը 5 կոպ.